

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱՄ ՅՈԼԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ազրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԷԴՈՒԱՐԴ ՍԵՐԳԵՅԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՐԱԶՅԱ ՍԵՐԳԵՅԻ ԾՊՆԵՑՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 14⁰⁰-ին Հայաստանի ազգային ազրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փողոց, 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ազրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի նոյեմբերի 18-ին:

002 Մասնագիտական խորհրդի
գիտ. քարտուղար, դոցենտ



Վ.Ս. Ալեքսանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հանրապետության գյուղատնտեսությունն ունի կարևորագույն տեղ երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման, հանրապետության բնակչության զբաղվածության ապահովման, գյուղական բնակավայրերի զարգացման և, որ ամենակարևորն է, բնակչության պարենային անվտանգության ապահովման համար, սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ գյուղատնտեսությունում արդյունաբերականացման մակարդակը զգալիորեն ցածր է, մասնավորապես ցածր է գյուղատնտեսության արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակը, որի հետևանքով բարձր է ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը, գյուղատնտեսությունում չափազանց դանդաղ տեմպերով են ներդրվում արդիական այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք նախապայման են հանդիսանում գյուղատնտեսությունում արտադրողականության բարձրացման և ոլորտի արդյունաբերականացման համար:

Տարբեր ոլորտների, մասնավորապես գյուղատնտեսության արդյունաբերականացման վիճակը բնորոշող կարևոր կատեգորիաներից է արտադրողականությունը, որն ունի գրեթե միևնույն իմաստն արտահայտող տարբեր բնորոշումներ:

Հանրապետության գյուղատնտեսությունում՝ զբաղվածության բարձր մակարդակի հետ մեկտեղ, ցածր է աշխատուժի օգտագործման մակարդակը: Վերջին տվյալների ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունում աշխատանքի արտադրողականությունը 9 անգամ, իսկ ընդհանուր վերցրած արդյունաբերությունում 7.1 անգամ գերազանցում է գյուղատնտեսության արտադրողականության ցուցանիշը: Ներկայացված տվյալները վկայում են, որ հանրապետության գյուղատնտեսությունում՝ ոլորտի առանձնահատկություններով և այլ գործոններով պայմանավորված, ցածր է արդյունաբերականացման մակարդակը, որը գլխավորապես հետևանք է գյուղատնտեսության տարբեր արտադրական գործընթացներում արտադրողականության ցածր մակարդակի:

Ընդհանուր առմամբ, շուկայական տնտեսության զարգացման ներկա պայմաններում հանրապետության գյուղատնտեսությունում արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղղությունների կանխորոշման ուղղությամբ համապարփակ ուսումնասիրություններ չեն իրականացվել: Նշվածն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունն ու հրատապությունը, որը բխում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման, առաջնահերթ անհրաժեշտ մթերքների արտադրության ծավալների ավելացման, դրանց որակի բարելավման և հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման պահանջներից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման հիմնական ուղղությունների առաջադրումն է: Այդ նպատակի իրականացման համար աշխատանքում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գյուղատնտեսության արդյունաբերականացման էությունը և առանձնահատկությունները,
- հիմնավորել գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտությունը և դրան նպաստման մոտեցումները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները և ոլորտի արդյունաբերականացման պայմանները,

- ուսումնասիրել գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը և տեղայնացման հնարավորությունները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման ներկայիս նախադրյալները,
- գնահատել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները,
- գնահատել գյուղատնտեսության արդյունաբերականացման գործոնների քանակական ազդեցությունը,
- առաջարկել գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները,
- գնահատել գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունն է, մասնավորապես ոլորտում արդյունաբերականացման վիճակը, դրա փոփոխության միտումները, իսկ առարկան՝ գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման հիմնական ուղիների առաջադրումն է:

Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝ գյուղատնտեսության արդյունաբերականացմանն առնչվող հայեցակարգերը, ծրագրերը, արտասահմանյան և հայրենական հետազոտողների գյուղատնտեսության արդյունաբերականացման, դրանց տնտեսական խնդիրների լուծման հետ առնչվող տարբեր հետազոտություններն ու աշխատությունները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել՝ ուսումնասիրվող բնագավառին առնչվող օրենսդրական ակտերը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության (ՀՀ էկոնոմիկայի նախարարության), որոշ հետազոտական կենտրոնների տեղեկատվական, վերլուծական, հաշվետվողական նյութերը, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները և ուսումնասիրվող բնագավառի հետ առնչվող այլ տեղեկատվական նյութերը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, տնտեսամաթեմատիկական, համեմատական վերլուծության, համադրման և այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական նորույթը և արդյունքները: Հետազոտության հիմնական նորույթը կայանում է նրանում, որ գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտման արդյունքում՝ կանխորոշվել են դրանց լուծման հիմնական ուղղությունները: Հիմնական գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունների համատեքստում գնահատվել են ոլորտի արդյունաբերականացման պայմանները և գործոնները,
- բացահայտվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները,
- գնահատվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման վրա ազդող մի շարք գործոնների քանակական ազդեցությունը,
- մշակվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները,

- գնահատվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: ՀՀ գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղղությամբ ատենախոսությունում իրականացված բազմակողմանի ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկությունները տեսական ու գործնական նշանակություն ունեն և կիրառության դեպքում կարող են իրական հիմք հանդիսանալ տվյալ բնագավառում քաղաքականության կատարելագործման, հայեցակարգերի, ծրագրերի մշակման համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների կողմից՝ համապատասխան քաղաքականության մշակման ու իրականացման ուղղությամբ, ինչպես նաև օգտակար լինել ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող տնտեսագետների, ասպիրանտների և ուսանողների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային էկոնոմիկայի և Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնների համատեղ նիստում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական հոդվածներում:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը՝ առանց հավելվածների, կազմում է 164 էջ, ներառյալ՝ օգտագործված գրականության ցանկը, այն ներառում է 36 աղյուսակ և 4 զծապատկերներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորոյթն ու արդյունքները, արդյունքների գործնական նշանակությունը, փորձարկումը և հրապարակումները, կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Գյուղատնտեսության արդյունաբերականացման տեսական և մեթոդաբանական դրույթները» գլխում ներկայացվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման էությունը և առանձնահատկությունները, գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտությունը և դրան նպաստման մոտեցումները, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները և ոլորտի արդյունաբերականացման պայմանները:

Գյուղատնտեսության արդյունաբերականացումը՝ դա ոլորտի արտադրական գործընթացի կազմակերպումն է արդյունաբերական հիմունքներով՝ կիրառելով արտադրության արդիական տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաներ:

Արդյունաբերականացման մակարդակը հիմնականում բնորոշվում է արտադրողականության մակարդակով, որը բնութագրվում է ցուցանիշների ամբողջությունով, վերջիններիս վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել արտադրական միավորի կամ առանձին վերցրած ճյուղի զարգացման տեմպերը, ինչպես նաև գնահատել բաց թողումները և ոչ

ցանկալի միտումները: Աշխատանքի արտադրողականության կատեգորիայի հետ անուղղակիորեն և ուղղակիորեն կապված են արտադրական միավորի անձնակազմի որակավորումը և շահերը, արտադրության տեխնիկական մակարդակը, արտադրանքի որակը, կառավարման, մարքեթինգի մակարդակը, շրջակա միջավայրը և այլն:

Արդյունաբերականացումը՝ ինչպես տնտեսության տարբեր ոլորտներում, այնպես էլ գյուղատնտեսությունում, պահանջում է արտադրության գործընթացում չկիրառված առավել արդյունավետ տեխնոլոգիաների կիրառում, որակյալ աշխատուժի օգտագործում, արտադրական գործընթացում կատարելագործված նյութերի ներդրում և այլն:

Հաշվի առնելով այն, որ արդյունաբերականացման մակարդակը բնութագրվում է աշխատանքի արտադրողականության ցուցանիշով, նախ ուսումնասիրել ենք գյուղատնտեսության այն ցուցանիշների վերջին տարիների միտումները, որոնք պայմանավորում են ոլորտում աշխատանքի արտադրողականությունը: Տնտեսության տարբեր ճյուղերի հետ համադրման համար՝ դիտարկել ենք նաև տնտեսության այլ ոլորտներում արտադրողականությունը բնութագրող ցուցանիշները: Այդ ցուցանիշները առաջին հերթին վերաբերվում են համախառն արտադրանքին և ոլորտում միջին տարեկան զբաղվածների թվին: Նպատակահարմար է համարվել դիտարկել 2009-2018թթ. գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության (ըստ ենթաճյուղերի) և ընդհանուր արդյունաբերության ցուցանիշները: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի, զբաղվածների թվի և արտադրողականության ցուցանիշները վերջին տասնամյակում ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

«Գյուղատնտեսության համախառն արտադրանքի, զբաղվածների թվի և արտադրողականության ցուցանիշները 2009-2018թթ.¹»


Ցուցանիշները	Չափի Միավորը	Տարիները									
		2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	մլրդ դրամ	552.1	636.7	795.0	841.5	919.1	983.0	945.4	878.5	908.1	889.7
Զբաղվածներ	հազ. մարդ	454.8	457.4	457.4	437.2	422.1	394.8	379.0	338.1	317.1	300.0
Արտադրողականությունը	մլն դրամ/մարդ	1.21	1.39	1.74	1.92	2.18	2.49	2.49	2.60	2.86	2.96

Գյուղատնտեսության ոլորտի արդյունաբերականացման մակարդակի գնահատման համար համադրվել է ըստ ոլորտների աշխատանքի արտադրողականությունը: Վերջինս՝ առավել պատկերավոր ներկայացման համար, տրվել է գրաֆիկական պատկերմամբ (գծապատկեր 1):

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, ՀՀ ԱՎԾ, 2013. – էջ 59: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, ՀՀ ՎԿ, 2018. – էջ 61: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. Հունվար-դեկտեմբերին: ՀՀ ՎԿ, 2019. – էջ 20: Պարենային ապահովություն և աղքատություն 2019թ. հունվար-մարտ: ՀՀ ՎԿ, 2019. – էջ 12: Արտադրողականության ցուցանիշը հաշվարկվել է հեղինակի կողմից

Գծապատկերում ներկայացված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակը զիջում է տնտեսության մյուս ոլորտներին: 2018թ. տվյալներով գյուղատնտեսության արտադրողականությունը զիջում է գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության և ընդհանուր արդյունաբերության ցուցանիշը համապատասխանաբար՝ 5.4 և 6.6 անգամ:

Գյուղատնտեսությունում արդյունաբերականացման անհրաժեշտության մասին վկայում է նաև այն փաստը, որ գյուղատնտեսությունում չափազանց անարդյունավետ են օգտագործվում հողային ռեսուրսները: Վերջին տարիներին այն ունեցել է առավել վատթարացման միտում: Այսպես՝ 2018թ. տվյալներով գյուղատնտեսությունում ցանքատարածությունները կազմել են 242.3 հազ. հա², 446.0 հազ. հա³ վարելահողերի դիմաց: Այսինքն վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը կազմել է 54.3 %: Վերջինս չափազանց ցածր ցուցանիշ է և դրա բարելավման ուղղություններից մեկը՝ գյուղատնտեսության արդյունաբերականացումն է: Մասնավորապես գյուղատնտեսության մեքենայացման միջոցների կիրառումը և դրանց կատարելագործված տեսակների ներդրումը հանգեցնում է հողային ռեսուրսների օգտագործման բարելավմանը:



Գծապատկեր 1: Գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության և արդյունաբերության արտադրողականության փոփոխությունը 2009-2018թթ.⁴

² Պարենային ապահովություն և աղքատություն: 2019թ. հունվար-մարտ / ՀՀ ՎԿ, 2019. - 33 էջ

³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, ՀՀ ՎԿ, 2018. - էջ 301

⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

Գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտության հիմնավորման նկատառումներից ելնելով՝ կատարել ենք գործնային վերլուծություն:

Գործնային վերլուծության միջոցով փորձ է արվել բացահայտել սարքին վիճակում գտնվող գյուղատնտեսական հիմնական տեխնիկական միջոցների և գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների միջև փոխկախվածությունները 2009-2018թթ.:

Աղյուսակ 2-ում ներկայացված են ռեգրեսիոն վերլուծության արդյունքները, որոնք ցույց են տալիս, որ 2009-2018թթ. սարքին վիճակում գտնվող տրակտորների, բեռնատար մեքենաների և գյուղատնտեսության համախառն արտադրանքի միջև ձևավորվել է միջին ուժգնության կապ: Մասնավորապես ռեգրեսիոն վերլուծության համաձայն, այլ հավասար պայմաններում, ուսումնասիրվող տարիներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի տատանումների 9,7%-ը պայմանավորված է ՀՀ-ում սարքին տրակտորների քանակի տատանումներով, իսկ 13,9%-ը պայմանավորված է սարքին վիճակում բեռնատար մեքենաների քանակի տատանումներով:

Աղյուսակ 2

ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի և սարքին վիճակով գտնվող հիմնական գյուղատնտեսական տեխնիկական միջոցների քանակի միջև ռեգրեսիոն վերլուծության արդյունքները⁵

Գործոններ	Կոռելյացիայի գործակիցները	Դետերմինացիայի գործակիցները
Տրակտորներ (x_1)	$r_{yx1} = 0.311$	$R^2 = 0.096$
Բեռնատար մեքենաներ (x_2)	$r_{yx2} = 0.374$	$R^2 = 0.139$
Տրակտորային խոտհնձիչներ (x_3)	$r_{yx3} = 0.807$	$R^2 = 0.652$
Կերահավաք կոմբայններ (x_4)	$r_{yx4} = 0.653$	$R^2 = 0.426$
Տրակտորային գութաններ (x_5)	$r_{yx5} = 0.833$	$R^2 = 0.694$
Կուլտիվատորներ (x_6)	$r_{yx6} = 0.623$	$R^2 = 0.389$
Հավաքիչ մամլիչներ (x_7)	$r_{yx7} = 0.584$	$R^2 = 0.342$

Ըստ վերլուծության արդյունքների՝ ուժեղ կապ է ձևավորվել նաև սարքին վիճակում գտնվող տրակտորային խոտհնձիչների, կերահավաք կոմբայնների, տրակտորային գութանների, կուլտիվատորների, հավաքիչ-մամլիչների քանակի և գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների միջև:

Այսպիսով, արդյունաբերականացման անհրաժեշտությունն ակնհայտ է, որը իր բնույթով միտված է գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և երկրի պարենային անվտանգության ապահովմանը:

Աշխատանքում դիտարկվել են նաև գյուղատնտեսության արդյունաբերականացման մոտեցումները:

⁵ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Այն հանգամանքը, որ գյուղատնտեսությունում հիմնական արտադրության միջոցը հանդիսանում է հողը, մեծապես պայմանավորում է արդյունաբերականացման պայմանները, մասնավորապես՝ տեխնիկական միջոցները պետք է իրենց գործունեությունն իրականացնեն մեծ տարածքների վրա, բաց երկնքի տակ: Վերջինս էլ էականորեն բարդացնում է արդյունաբերականացման գործընթացը: Գյուղատնտեսության սեզոնայնությունն իր հերթին բարդություններ է ստեղծում արդյունաբերականացման համար: Բարդություններ կան նաև անասնապահական շինություններում միկրոկլիմայի ապահովման սարքավորումների մատչելիության, դրանց խնայողականության և օգտագործման ուղղությամբ:

Գյուղատնտեսությունում արտադրությունը գլխավորապես կազմակերպվում է բաց երկնքի տակ, մեծ հողատարածությունների վրա, որտեղ արտադրության տեխնոլոգիայի և արտադրանքի տեղափոխման համար պահանջվում են լրացուցիչ ծախսումներ⁶:

Աշխատանքում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիտարկված առանձնահատկությունները զգալիորեն խոչընդոտում են գյուղատնտեսության արդյունաբերականացման գործընթացին՝ բարդացնելով արդյունաբերականացմանն ուղղվող միջոցառումների իրականացումը:

Աշխատանքում դիտարկվել են նաև գյուղատնտեսության արդյունաբերականացման պայմանները: Այստեղ առաջնահերթ կարևոր է համարվում գյուղացիական տնտեսությունների չափերը և դրանց թիվը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական հողեր ունեցող տնտեսությունների բացարձակ գերակշռող մասը (99.9 %-ը) ունեն ֆիզիկական անձի կարգավիճակ և փոքր չափեր՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսությունների համեմատ: Ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող մեկ տնտեսության միջին չափը կազմում է 1.48 հա, իսկ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցողներինը՝ 62.57 հա:

Ներկայացված տվյալները վկայում են, որ տնտեսությունների թվի բացարձակ գերակշռող մասում արդյունաբերականացման պայմանները՝ դրանց փոքր չափերի հետևանքով, սահմանափակ են:

Դիտարկումները ցույց են տալիս, որ նույն վիճակն է նաև անասնապահությունում: Այստեղ նույնպես արդյունաբերականացման պայմանները բարենպաստ չեն՝ անասնազխաբանակի փոքրաթիվ լինելու պատճառով:

Ատենախոսության երկրորդ «Գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսագիտական հիմնախնդիրները» գլխում ներկայացվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը, տեղայնացման հնարավորությունները, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման ներկայիս նախադրյալները և արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները:

Գյուղատնտեսության նյութատեխնիկական առաջընթացի միջազգային փորձը վկայում է, որ ագրարային ոլորտը ունի նշանակալի նորարարական ներուժ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային լավագույն փորձի օրինակ է հանդիսանում Իսրայելի գյուղատնտեսությունը:

⁶ Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ ագրոպարենային ոլորտի տնտեսագիտական, ագրոնոմիական ու ճարտարագիտական մասնագիտությունների համար: /Գ. Դավթյան, Լ. Մարգարյան, Վ. Աբգարյան և ուրիշներ-Եր.: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004. - էջ 9-10

Իսրայելի գյուղատնտեսական սեկտորը բնութագրվում է արտադրության ինտենսիվ համակարգով, որը կապված է բնական ռեսուրսների անբավարարության հաղթահարման անհրաժեշտությամբ, հատկապես ջրի և մշակովի հողերի: Գյուղատնտեսական արտադրանքի մշտական ավելացմանը հնարավոր է եղել հասնել գիտնականների, ֆերմերների և առնչվող ճյուղերի հետ սերտ համագործակցության արդյունքում:⁷

Գյուղատնտեսության արդյունաբերականացման բնագավառի էական հաջողություններ է ապահովել Ամերիկայի Միացյալ Նահանգները: Վերջինիս ապահովման հիմնական նախադրյալներից է եղել ոլորտի էական պետական աջակցությունը, ագրոպարենային ոլորտի որակյալ կադրերի պատրաստումը, ինչպես նաև, որը շատ կարևոր է, գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների արագ փորձարկումը և ներդրումը:

Գյուղատնտեսության արդյունաբերականացման յուրահատուկ մոտեցումներ են կիրառվում Չինաստանում: Այստեղ մեծ տեղ ունի տեխնոլոգիաների կատարելագործումը, օգտագործվող ռեսուրսների խնայողությունը, արտադրված սննդամթերքի անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պահպանությունը, արտադրության մեջ ընդգրկված աշխատանքային ռեսուրսների որակավորման բարձրացումը և այլն:

Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել է նաև գյուղատնտեսության արդյունաբերականացման այլ զարգացած երկրների փորձը:

Աշխատանքում անդրադարձ է արվել զարգացած երկրների գյուղատնտեսությունում կիրառվող առանձին տեխնոլոգիաներին: Մասնավորապես գյուղատնտեսության արտադրական գործընթացի կառավարման համար օգտագործվում է այսպես կոչված «Իրերի ինտերնետը», որը ապահովում է կապը արտադրական օղակների միջև և ապահովում է արտադրական և տեխնոլոգիական գործընթացների կառավարումը, մարդկային ռեսուրսների պահանջարկի կրճատումը: Գյուղատնտեսությունում «Իրերի ինտերնետ» տեխնոլոգիայի կիրառման բնագավառներն են՝ ճշգրիտ երկրագործությունը, «խելացի» ֆերմաները, «խելացի» ջերմատները, հումքի կառավարումը, գյուղատնտեսական մթերքների պահպանումը, տրանսպորտի կառավարումը և այլն⁸:

Գյուղատնտեսության արդյունաբերականացման բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ տարբեր երկրներում գոյություն ունի արդյունաբերականացմանն ուղղված միջոցներ, մեխանիզմներ, տեխնոլոգիաներ որոնք որոշակի փոքր մասով կիրառություն ունեն հանրապետությունում, բացի այդ տեխնոլոգիաների գերակշռող մասը, համապատասխան պայմանների ստեղծման դեպքում, կարող է ներդրվել մեր հանրապետությունում: Հատկապես կարևոր է ոռոգման բնագավառում խելացի տեխնոլոգիաների կիրառումը: Մասնավորապես համապատասխան սարքավորումների կիրառումը հնարավորություն է տալիս մեծապես խնայել ջուրը, բարելավել սնուցման ռեժիմը, համապատասխան սարքավորումների տվյալների հիման վրա կառավարել ոռոգման գործընթացը՝ հիմք ունենալով հողի խոնավությունը, բույսի տեսակը և այլ պարամետրեր:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում շուկայական հարաբերություններին անցման ժամանակահատվածի առաջին երկու տասնամյակում գրեթե միջոցներ չեն ձեռնարկվել ոլորտի արդյունաբերականացման մակարդակի բարձրացմանն ուղղությամբ:

⁷ <https://mfa.gov.il/MFARUS/AboutIsrael/Economy/Pages/EconomySectors.aspx>

⁸ Кутбитдинов Юрий. Экономическое обозрение №3 (231) 2019.

<https://review.uz/ru/post/staty/trendi/umniye-instrumentiy-selskogo-xozyaystva>

Որոշակի աշխատանքներ են տարվել միջազգային ծրագրերի հաշվին մեքենայական հավաքակազմի, հիմնականում գյուղատնտեսական տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների որոշակի համալրման ուղղությամբ:

Աշխատանքում ուսումնասիրվել են 1997 թվականից սկսած տարբեր դրամաշնորհային ծրագրերով (ճապոնական, չինական, հնդկական) հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի՝ տրակտորների, կոմբայնների և գյուղատնտեսական գործիքների ծավալները: Դրանք, գյուղատնտեսական տեխնիկայի մասնավոր ներկրողների հետ մեկտեղ, որոշակի դրական նախադրյալ են հանդիսացել գյուղատնտեսության արդյունաբերականացման համար:

Գյուղատնտեսության ոլորտի արդյունաբերականացման լավագույն նախադրյալ են գյուղատնտեսության ոլորտում իրականացվող մի շարք պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ իրականացվող, արդիական տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված ծրագրերը:

Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրել ենք վերջին տարիներին գյուղատնտեսությունում պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ իրականացվող ծրագրերը, որոնք կարող են նպաստել ոլորտի արդյունաբերականացմանը: Դիտարկվել է այդ ծրագրերի առանձնահատկությունները իրականացման ընթացքը, որը հնարավորություն է տվել գնահատելու առկա խնդիրները և առաջադրել դրանց բարելավման մոտեցումները:

Այդ ծրագրերից կարելի է առանձնացնել հետևյալը՝

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր:

Դիտարկումները ցույց են տալիս, որ նշված ծրագիրը ունի իրականացման հաջող ընթացք և որ այն որոշակիորեն նպաստում է գյուղատնտեսության արդյունաբերականացման նախադրյալների ստեղծմանը:

«Գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագիր:

Ծրագրի իրականացման ընթացքի ուսումնասիրությունը վկայում է, որ այն չափազանց դանդաղ է ընթանում, գյուղատնտեսության արդյունաբերականացման տվյալ գործիքի հնարավորությունները լավ չեն օգտագործվում, հետևաբար անհրաժեշտություն է ծրագրի պայմանների վերանայումը, արդյունքում՝ առավել խթանիչ մեխանիզմների կիրառումը:

Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիր:

Օպերատիվ տվյալների վերլուծությունները վկայում են, որ ծրագրի իրականացման ընթացքը նույնպես չափազանց դանդաղ է, սակայն հնարավոր է համարվում ծրագրի տեմպերի արագացումը, հաշվի առնելով նաև այն, որ ծրագրին մասնակցության դիմումների քանակը զգալի է: Ծրագրի կարևորությունից ելնելով՝ կարող ենք հետևություն անել, որ ծրագիրը կարող է լինել գյուղատնտեսության արդյունաբերականացման կարևոր նախադրյալներից մեկը:

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր գործոններով պայմանավորված՝ ծրագրով նախանշված ծավալներով աշխատանքները չեն կատարվում, և որ փաստացի կատարողականի ցուցանիշները հեռու են նախանշվածից: Վերջինս, մեր կարծիքով, արդյունք է մի շարք գործոնների, այդ թվում, ծրագիրը լինելով նոր, մեկնարկման դժվարություններ կան կազմակերպման, իրազեկման հարցերում:

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծրագրով նախատեսված ծավալները մեկնարկից հետո և 2019թ. առաջին երեք եռամսյակներին չեն կատարվել, ինչն էլ պահանջում է ծրագրի մեխանիզմների և աջակցության չափի վերանայումը:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր:

Կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ առավել հաջող իրականացման ընթացք ունի տվյալ ծրագիրը, որը կարևորագույն նախադրյալ է հանդիսանում գյուղատնտեսության արդյունաբերականացման համար:

Ծրագրի իրականացման տվյալների վերլուծությունները վկայում են, որ ծրագրի ծավալային ցուցանիշները հիմնականում կատարվում են: Ծրագիրը հաջող է ընթանում, որի չափանիշներից մեկը դա ժամկետանց վարկերի փոքր տեսակարար կշիռն է: Այսպես, տրամադրված ընդհանուր վարկերի թվի մեջ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմում է 0.7 %, որը տրամադրված վարկերի գումարի 0.6 %-ն է:

Գյուղատնտեսական արդյունաբերականացման նախադրյալներից է նաև հանրապետությունում ջերմատնային տնտեսության զարգացման տեմպերը և ջերմատնային տնտեսության զարգացման համար օրենսդրական դաշտի համեմատաբար բարենպաստ պայմանները, մասնավորապես ջերմոցային կոնստրուկցիաների և ջերմատներում օգտագործվող նյութերի ներմուծումը և ներքին շրջանառությունը ավելացված արժեքի հարկից ազատումը⁹:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները բազմազան են և դրանք կարելի է տարանջատել հետևյալ խմբերի.

- արդյունաբերականացման գործընթացի ֆինանսական ապահովումը,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող տնտեսությունների փոքր չափերը,
- տնտեսավարման ձևերի և ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- գյուղատնտեսությունում տնտեսավարողների արդյունաբերականացման պահանջներին համարժեք գիտելիքների և հմտությունների առկայության ապահովումը,
- արդյունաբերականացման գործընթացում պետություն-մասնավոր հատված համագործակցության կատարելագործումը,
- գյուղատնտեսության ոլորտում արդյունաբերականացմանն ուղղված պետական ծրագրերի մեխանիզմների կատարելագործումը և մոտեցումների վերանայումը:

Աշխատանքում դիտարկել ենք գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները առանձին առանձին, դրանք բնութագրվել են չափելի ցուցանիշների հիման վրա, ինչպես նաև անդրադարձել ենք նշված հիմնախնդիրները պայմանավորող 21 գործոնների բնութագրմանը և մեկնաբանությանը:

⁹ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենք (ՀՕ-195, 2001թ.)

Աշխատանքի երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները» գլխում ներկայացվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման գործոնների ազդեցության քանակական գնահատումը, գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները, գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Գյուղատնտեսության արդյունաբերականացման վրա տարբեր գործոնների ազդեցության քանակական գնահատման համար կիրառել ենք հետևյալ մեթոդական մոտեցումը: Հաշվի առնելով այն, որ արդյունաբերականացման մակարդակի բնորոշման համար որպես ընդհանրացնող ցուցանիշ հիմք ենք ընդունում արտադրողականության ցուցանիշը, հետևաբար տարբեր գործոնների ազդեցությունը դիտարկում ենք այդ ցուցանիշների վրա: Մեր դիտարկման համար հիմք ենք ընդունել 2004-2018թթ. տվյալները:

Ըստ մեր դիտարկումների՝ արտադրողականության վրա ազդեցության տեսանկյունից, հիմնավորված ենք համարում հետևյալ ցուցանիշները՝ գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին մակարդակը, ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսությանը հատկացումները, գյուղատնտեսական ծագման արտադրանքի արտահանման ծավալները՝ արժեքային արտահայտությամբ, առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի քանակը:

Ռեգրեսիոն մոդելների նշանակալիության ապահովման նպատակով վերլուծությունները կատարվել են առանձին-առանձին:

Ներկայացնենք ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի վրա առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի և պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացումների ծավալների ազդեցությունը: Ուսումնասիրվող երևույթների միջև կառուցվել է եռաչափ գծային ռեգրեսիոն մոդել: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակում ներկայացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող երևույթների միջև ձևավորվել է ուժեղ կապ ($R_{yx1x2} = 0.880$), և կառուցված ռեգրեսիոն մոդելը կարող ենք համարել նշանակալի՝ ($F = 20.6 > F_{crit} = 3.89$):


Համաձայն կառուցված ռեգրեսիոն մոդելի՝ 2004-2018թթ. ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների յուրաքանչյուր մեկ մլրդ. դրամով ավելացումը, այլ հավասար պայմաններում, նպաստել է գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի աճին՝ 0,02 մլրդ. դրամով ($a_1 = 0.02$):

Կատարված վերլուծության արդյունքները վկայում են, որ ուսումնասիրվող տարիներին ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացումների ծավալների և գյուղատնտեսության արտադրողականության միջև ձևավորվել է ոչ նշանակալի կապ ($t_{a2} = 1.3 < t_{crit} = 2.17$): Ինչպես երևում է կառուցված ռեգրեսիոն մոդելից, այս ցուցանիշների միջև եղել է հակադարձ կապ ($a_2 = -0,04$), որը պայմանավորված է եղել ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացումների ծավալների նվազման միտումներով և ոչ բավարար մակարդակով:

ՀՀ գյուղատնտեսությունում արտադրողականության մակարդակի վրա ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացումների և առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների միջև ռեգրեսիոն վերլուծության արդյունքները¹⁰

Ցուցանիշներ	Արդյունքներ
Բազմակի կոռելյացիայի գործակիցը	$R_{yx1x2} = 0.880$
Բազմակի դետերմինացիայի գործակիցը	$R^2_{yx1x2} = 0.774$
Ռեգրեսիոն մոդելը	$\hat{y}_t = 0.95 + 0.02x_{1t} - 0.04x_{2t}$
Մասնակի էլյաստիկության գործակիցները	$\vartheta_1 = 0.75; \vartheta_2 = -0.22$
Ռեգրեսիայի գործակիցների նշանակալիությունը	$t_{a1} = 6.2, t_{a2} = 1.3$ $t_{crit}(\alpha=0.05, k=12) = 2.17$
Մոդելի նշանակալիության գնահատականը	$F = 20.6$ $F_{crit}(\alpha=0.05, k1=2; k2=12) = 3.89$

ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի և գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակի միջև ձևավորվել է ուժեղ և ոչ գծային կախվածություն, որը ներկայացված է գծապատկեր 2-ում:




Գծապատկեր 2. ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի և գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին մակարդակի միջև փոխկախվածությունը 2004-2018թթ.¹¹

Համաձայն կառուցված ռեգրեսիոն մոդելի՝ 2004-2018թթ., այլ հավասար պայմաններում, ՀՀ-ում գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին մակարդակի մեկ տոկոսով ավելացումը նպաստել է գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի 13,1 տոկոսով աճին ($a_1 = 13.1$):

¹⁰ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից
¹¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

Գծապատկեր 3-ում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ 2004-2018թթ. ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի և գյուղատնտեսական ծագման արտադրանքների արտահանման ծավալների միջև ձևավորվել է ուղիղ և շատ ուժեղ կախվածություն:



Գծապատկեր 3. ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի և գյուղատնտեսական ծագման արտադրանքների արտահանման ծավալների փոխկախվածությունը 2004-2018թթ.¹²

Կառուցված ռեգրեսիոն մոդելի համաձայն, 2004-2018թթ., այլ հավասար պայմաններում, ՀՀ-ում գյուղատնտեսական ծագման արտադրանքների արտահանման ծավալների մեկ մլն. ԱՄՆ դոլարով ավելացման հետ զուգահեռ, ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակը բարձրացել է 0.005 մլրդ. դրամով ($a_1 = 0,005$):

Աշխատանքում դիտարկվել են գյուղատնտեսությունում արդյունաբերականացմանն ուղղվող արդիական տեխնոլոգիաների ներդրման տնտեսական արդյունավետությունը: Մասնավորապես դիտարկվել է ոռոգման արդիական տեխնոլոգիաների, արդիական ջերմատնային տնտեսությունների, ինտեսիվ պտղատու և խաղողի այգիների, «Խելացի» անասնաշենքերի և հակակարկտային ցանցերի ներդրման տնտեսական արդյունավետությունը:

Ոռոգման արդիական տեխնոլոգիաների արդյունավետության հաշվարկների համար հիմք ենք ընդունել ՀՀ կառավարության 2019թ. մարտի 7-ի՝ «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի» տվյալները¹³:

Տարբեր բազմամյա տնկարկների համար կաթիլային համակարգի ներդրման ծախսերը տարբեր է, որը հիմնականում պայմանավորված է բաշխիչ ցանցի բաղադրիչների տարբեր արժեքներով:

1 հա լրիկի դաշտում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման ծախսերը կազմել է 1383.4 հազ. դրամ:

¹² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից
¹³ ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիրը հաստատելու մասին» N°212-Լ որոշում

Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման տնտեսական արդյունավետության գնահատման համար գնահատել ենք (հաշվարկել ենք) առանձին կատարվող աշխատանքների ծախսերը կաթիլային և ավանդական եղանակի դեպքում:

Կաթիլային ոռոգման համակարգի պահպանման ծախսերը 1 հա հաշվով, որը ներառում է հնարավոր վերանորոգման աշխատանքները, պահպանումը, կաթոցիկների, ֆիլտրերի խնամքը, պոմպերի սպասարկումը գնահատվում է տարեկան 50-60 հազ. դրամ:

Ըստ կատարված հաշվարկների լրիկի ավանդական մեթոդով մշակության համար կատարված ծախսերը 1 հա-ի հաշվով կազմում է 1366.0 հազ. դրամ:

Ոչ ավանդական կաթիլային ոռոգման մշակության դեպքում պարարտանյութի ծախսը կրճատվում է 40 %-ով, քաղհանը՝ 60 %-ով, ջրի ծախսը՝ 55 %-ով, ջրվորի գումարը՝ 83 %-ով, թունաքիմիկատների ծախսը՝ 20 %-ով, կավելանա բերքատվությունը՝ 20 %-ով:

Ըստ կատարված հաշվարկների՝ կաթիլային ոռոգման դեպքում լրիկի մշակության ծախսերը կազմում են 1114.4 հազ. դրամ:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ խաղողի մշակության և բերքահավաքի ծախսերը ավանդական ոռոգման պայմաններում կազմում են 1209.8 հազ. դրամ:

Կաթիլային ոռոգման դեպքում ակնկալվում են հետևյալ արդյունքները: Պարարտացման ծախսերը կրճատվում են 30 %-ով, պեստիցիդների և բույսերի պաշտպանության ծախսերը 40 %-ով, ջրի ծախսը՝ 55 %-ով, ջրվորի գումարը՝ 87 %-ով, բերքատվությունը ավելանում է 20 %-ով, ակնկալվում է բերքահավաքի և տեղափոխման ծախսերի 20.0 % ավելացում:

Կաթիլային ոռոգման դեպքում խաղողի 1 հա-ի մշակության և բերքահավաքի ծախսերը հաշվարկվել են 1062.4 հազ. դրամ:

Խնձորի մշակության և բերքահավաքի աշխատանքների համար պահանջվող ծախսերը ավանդական ոռոգման դեպքում հաշվարկվել են 1191.8 հազ. դրամ:

Կաթիլային ոռոգման դեպքում ազոտական պարարտանյութի ծախսը կրճատվում է 40 %-ով, պեստիցիդների ծախսերը՝ 30 %-ով, պաշտպանության կազմակերպման ծախսերը՝ 30 %-ով, բնային տարածությունների փորը՝ 100.0 %-ով, ջրի ծախսը՝ 45 %-ով, առուների մաքրումը՝ 100.0 %-ով, աշխատանքային ծախսումների պահանջը՝ 20.0 %-ով, բերքատվությունը ավելանում է 20 %-ով, իսկ բերքի տեղափոխման ծախսերը ավելանում են 10 %-ով:

Կաթիլային ոռոգման դեպքում խնձորի 1 հա-ի մշակության և բերքահավաքի ծախսերը հաշվարկվել են 884.8 հազ. դրամ:

Հաշվարկների համար բերքատվության տվյալների համար հիմք է ընդունվել ՀՀ վիճակագրության կոմիտեի վերջին՝ 2018թ. տվյալները:

Լուիկի համար հիմք ենք ընդունել ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի 2018թ. միջին համակշռված բերքատվությունը, ըստ հաշվարկների այն կազմել է 355.6 g/հա¹⁴:

Խնձորի բերքատվության համար ելակետ ենք ունեցել ՀՀ Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի հնդավոր պտղատեսակների 2018թ. միջին համակշռված բերքատվությունը: Ըստ կատարված հաշվարկների այն կազմել է 167.1 g/հա¹⁵:

Խաղողի բերքատվության համար ելակետ ենք ընդունել ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի 2018թ. միջին համակշռված տվյալները, որը կազմել է 145.2 g/հա¹⁶:

¹⁴ Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018 թվականին: ՀՀ ՎԿ, Երևան, 2018. - էջ 43

¹⁵ Նույն տեղում: էջ 69

¹⁶ Նույն տեղում: էջ 74

Գների համար հիմք ենք ընդունել ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019 թվականի տվյալները: Այն կիլոգրամի համար լուրիկի դեպքում կազմել է 156.8 դրամ, խնձորի դեպքում՝ 200.3 դրամ և խաղողի դեպքում՝ 166.6 դրամ:

Կաթիլային ոռոգման տնտեսական արդյունավետության հաշվարկների արդյունքները լուրիկի, խնձորի և խաղողի համար ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Կաթիլային ոռոգման տնտեսական արդյունավետության հաշվարկների արդյունքները լուրիկի, խնձորի և խաղողի համար¹⁷

Ցուցանիշները	Չափի միավորը	Լուրիկ		Խնձոր		Խաղող	
		Ավանդական ոռոգում	Կաթիլային ոռոգում	Ավանդական ոռոգում	Կաթիլային ոռոգում	Ավանդական ոռոգում	Կաթիլային ոռոգում
Ոռոգման համակարգի ներդրման արժեքը	հազ. դրամ	-	1383.4	-	1878.2	-	1234.4
Կաթիլային ոռոգման սարքավորումների պահպանման ծախսերը	հազ. դրամ	-	60.0	-	60.0	-	60.0
Մշակության և բերքահավաքի ծախսերը 1 հա հաշվով	հազ. դրամ	1366.0	1062.4	1191.8	884.8	1209.8	1062.4
Ընդամենը սեզոնային ծախսը	հազ. դրամ	1366.0	1122.4	1191.8	944.8	1209.8	1122.4
Ակնկալվող բերքը	ց/հա	355.6	426.7	167.1	200.5	145.2	174.2
Իրացման գինը 1 կգ համար	դրամ	156.8	156.8	200.3	200.3	166.6	166.6
Հասույթը	հազ. դրամ	5575.8	6690.7	3347.1	4016.1	2419.1	2902.2
Զուտ եկամուտ	հազ. դրամ	4209.8	5568.3	2155.2	3071.2	1209.2	1779.8
Հավելյալ զուտ եկամուտը կաթիլային ոռոգման համակարգի ներդրման արդյունքում	հազ. դրամ	-	1358.5	-	916.0	-	570.5
Կաթիլային ոռոգման համակարգի փոխհատուցման ժամկետը հավելյալ զուտ եկամուտի հաշվին	տարի	-	1.02	-	2.05	-	2.16

Կատարված հաշվարկները ցույց են տալիս կաթիլային ոռոգման համակարգի բարձր արդյունավետությունը: Ըստ հաշվարկների՝ լուրիկի մշակության դեպքում համակարգի ներդրումից հավելյալ զուտ եկամուտը կազմել է 1358.5 հազ. դրամ, որը հնարավորություն է տալիս ծախսերը փոխհատուցել մեկ տարում, իսկ խնձորի և խաղողի մշակության դեպքում հավելյալ զուտ եկամուտը համապատասխանաբար կազմել է՝ 916.0 և 570.5 հազ. դրամ, որը հնարավոր

¹⁷ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

րություն է տալիս ծախսերը փոխհատուցել շուրջ երկու տարում: Հաշվի առնելով այն, որ կաթիլային ոռոգման համակարգի խողովակների և կաթոցիկների օգտագործման ժամկետը առնվազն 5 տարի է, իսկ պոմպերինը և ֆիլտրերինը 10 տարի, ապա ակնհայտ է դառնում համակարգի ներդրման բարձր արդյունավետությունը:

Ջերմատների արդյունավետության գնահատման համար ելակետային տվյալների համար հիմք են հանդիսացել «ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ» ՍՊԸ-ի կողմից մշակված «Գործարար և ներդրումային խորհրդատվություն» ձեռնարկի որոշ նյութեր¹⁸:

Արդյունավետությունը գնահատել ենք ապակյա, պոլիկարբոնատային, պոլիէթիլենային մեկ շերտ և պոլիէթիլենային երկու շերտ ջերմատների համար:

Հաշվի առնելով այն, որ հանրապետության գյուղացիական տնտեսությունների պայմաններում առավել նպատակահարմար կարող են լինել 500 մ² տարածք ունեցող ջերմատները, արդյունավետության հաշվարկները կատարել ենք այդ չափի ջերմատների համար:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 500 մ² պոլիկարբոնատային ծածկով ջերմոցի հիմնման համար կատարվող ծախսերը ընդհանուր առմամբ հաշվարկվել են 1604.3 հազ. դրամ, 1 մ² համար կազմում է 32.1 հազ. դրամ: Կատարվող ծախսերի մեջ գերակշռող են ջերմատան կառուցման ծախսերը (45.2 %) և ջեռուցման ծախսերը (48.8 %):

Անհրաժեշտ ենք համարել դիտարկել նաև պոլիէթիլենային թաղանթով ջերմատների կառուցման ծախսերը ինչպես մեկ շերտ, այնպես էլ երկշերտ թաղանթների դեպքում:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 500 մ² պոլիէթիլենային մեկշերտ և պոլիէթիլենային երկշերտ ջերմատների կառուցման համար պահանջվող գումարը կազմում են՝ 12191.6 և 1303.6 հազ. դրամ: Ներկայացված հաշվարկային ամփոփ տվյալները վկայում են, որ պոլիէթիլենային ծածկով ջերմատների հիմնադրման ծախսերը միաշերտի և երկշերտի համար համապատասխանաբար կազմել են՝ 24.4 և 26.1 հազ. դրամ: Ջերմատների կառուցման ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն ջեռուցման համակարգի ծախսերը, որոնք միաշերտ և երկշերտ ջերմատների համար համապատասխանաբար կազմել են 64.2 և 60.1 %: Այնուհետև համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմում ջերմատան կառուցման ծախսերը, համապատասխանաբար՝ 30.3 և 34.8 %:

Ելակետ ունենալով տարբեր ջերմատների հիմնադրաման ծախսերը՝ գնահատենք դրանց արդյունավետությունը, մասնավորապես՝ ներդրումների փոխհատուցման ծախսերը:

Մեկ տարվա կտրվածքով երկու ջերմոցային ցիկլերի ընթացքում 1 մ² ստացվում է 40 կգ բանջարեղենի բերք, այսինքն մեկ ցանքից կարել է ստանալ 20 կգ բերք, որը իրատեսական է ագրոտեխնիկական պահանջների պահպանման դեպքում:

Տարբեր ջերմատների համար հաշվարկվել է ամորտիզացիոն հատկացումների գումարը՝ ելնելով օգտագործված նյութերի, հանգույցների և սարքավորումների տեսակից:

Կատարված հաշվարկները վկայում են, որ ջերմատնային տնտեսությունում կապիտալ ներդրումները փոխհատուցվում են կարճ ժամանակահատվածում: Ամորտիզացիոն հատկացումների ծախսերը հաշվի առնելով՝ ծախսերը համապատասխանաբար փոխհատուցվում են՝ 6.5; 5.2; 3.8 և 4 տարիների ընթացքում, որենք կապիտալ ներդրումների փոխհատուցման լավագույն ժամկետներ են:

Գյուղատնտեսության արդյունաբերականացման կարևոր ուղղություններից է ինտենսիվ այգեգործության զարգացումը, հետևաբար կարևոր ենք համարել անդրադառնալ ինտենսիվ այգեգործության արդյունավետության հարցերին:

¹⁸ «Գործարար և ներդրումային խորհրդատվություն»: «ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ» ՍՊԸ: Երևան, 2012.

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ պտղատու ինտենսիվ այգու հիմնման և առաջի տարվա խնամքի համար պահանջվող ներդրումները կազմում են 20361.9 հազ. դրամ, որի բացարձակ գերակշռող մասը՝ 90.4 %-ը, ինտենսիվ այգու հիմնման ծախսերն են:

Խաղողի ինտենսիվ այգու հիմնման և առաջին տարվա խնամքի աշխատանքների համար պահանջվող ներդրումները կազմում են 15982.8 հազ. դրամ, որի նույնպես բացարձակ գերակշռող մասը՝ 88.6 %-ը, կազմում են այգու հիմնման աշխատանքները:

Ինտենսիվ այգիների հիմնման և հետագա մշակության արդյունավետությունը որոշել ենք հիմնական համարվող հետևյալ պտղատեսակների՝ ծիրանի, դեղձի, սալորի, կեռասի, խնձորի, տանձի և խաղողի համար: Հաշվարկների համար ընդունել ենք որոշ ելակետային տվյալներ, մասնավորապես՝ բերքատվության մեջ մտնելու ժամկետը, սպասվող բերքը, 1 կգ բերքի համար արտադրողի գինը: Արտադրողի գնի վերաբերյալ հիմք ենք ընդունել ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները՝ 2019 թվականի համար:

Առաջին տարվա բերքը ընդունել ենք սպասվող միջին բերքի 15 տոկոսի չափով: Երկրորդ տարվա բերքը վերցրել ենք նախատեսված առավելագույն բերքի 50 %-ի չափով, իսկ երկրորդ տարվա խնամքի ծախսերը վերցրել ենք առաջին տարվա ծախսերից 20 %-ով ավելի: Երրորդ տարվա բերքի ծավալը վերցվել է նախատեսված առավելագույն բերքի 75 %-ի չափով, իսկ խաղողի մասով՝ 85 %-ի չափով: Չորրորդ տարում բերքատվության մակարդակը վերցնում ենք սպասվող բերքատվության առավելագույն մակարդակը:

Ինչ վերաբերում է երկրորդ տարվա բերքի ստացման ծախսերին, ապա առաջին տարվա ծախսերին հավելել ենք 20 %, երրորդ տարվա համար՝ երկրորդ տարվա ծախսերին հավելել ենք ևս 10 % և հետագա տարիներին թողնելով նույն մակարդակի:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ առաջին 4 տարիների ընթացքում ստացված հասույթի հաշվին փոխատուցվում են այգիների հիմնման ծախսերը խնձորենու, տանձենու, ծիրանենու, դեղձենու և խաղողի համար: Նույն առաջին 4 տարում ստացված շահույթի հաշվին փոխատուցվում են խնձորենու, ծիրանենու հիմնման ծախսերը: Սալորենու հիմնադրման ծախսերը հասույթի հաշվին ամբողջությամբ փոխատուցվում են առաջին 5 տարվա ընթացքում: Շահույթի հաշվին տանձենու ինտենսիվ այգու հիմնման ծախսերը փոխատուցվում են 5 տարվա ընթացքում: Ինչ վերաբերվում է սալորի և խաղողի ինտենսիվ այգու հիմնադրման ծախսերին, ապա դրանք, ըստ մեր կողմից կատարված հաշվարկների, փոխատուցվում են 8-րդ տարում:

Կատարված հաշվարկները վկայում են ինտենսիվ այգեգործության բարձր արդյունավետության մասին, որը գյուղատնտեսության արդյունաբերականացման կարևոր ուղղություններից է: Հանրապետության համար առավել բարձր արդյունավետություն ապահովում են խնձորենու, ծիրանենու և դեղձենու ինտենսիվ մշակությունները:

Գյուղատնտեսության արդյունաբերականացման կարևոր ուղղություններից է «Խելացի» անասնաշենքերի զարգացման խթանումը: Այդ տեսանկյունից կարևորվում է «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիրը», որը հաստատվել է ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի №369 Լ որոշմամբ:

Փորձ ենք արել գնահատել նշված որոշմամբ հաստատված ծրագրով սահմանված երկրորդ մոդելի անասնաշենքերի գործունեության արդյունավետությունը, մասնավորապես՝

համախառն արտադրանքի և շահույթի հաշվին կատարված ներդրումների փոխհատուցման ժամկետների գնահատումը¹⁹:

«Խելացի» անասնաշենքի արդյունավետությունը գնահատվել է 25 կովի պահվածքի դեպքում: Հաշվարկները կատարվել են Հոլշտին ցեղի կովերի համար:

Հաշվի առնելով այն, որ անասնաշենքը նախատեսված է մթերատու կենդանիների (կովերի) համար, ապա կատարված ծախսերի փոխհատուցումը դիտարկել ենք արտադրված կաթի իրացումից ստացված շահույթի հաշվին: Հոլշտին ցեղի կովերի կաթնատվությունը առաջին երկու տարիներին ընդունել ենք 3500 կգ, հետագա տարիներին որոշակիորեն ավելանում է: Սակայն որոշակի ժամանակահատվածում կաթնատվությունը սկսում է նվազել և անհրաժեշտություն է առաջանում կաթնային հոտի երիտասարդացման:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 1կգ կաթի ինքնարժեքը միջին հաշվով կազմում է 100 դրամ, հետագայում նախատեսվում է արտադրության գործընթացի կատարելագործման հետ մեկտեղ ինքնարժեքի որոշակի իջեցում՝ առաջիկա յոթ տարիներին միջև 90 դրամի:

Մեր կողմից կատարված հաշվարկներով ակնհայտ է, որ «Խելացի» ֆերմայի գործունեության արդյունքում միայն կաթի իրացումից ստացված շահույթի հաշվին ծախսերը փոխհատուցվում են 5.5 տարում: Այստեղ հաշվի չի առնվում մատղաշի ստացումը, այն, որ տարեկան կստացվի ավելի քան 23 գլուխ հորթ, որը գնահատվում է որպես առանձին եկամուտ:

Կատարված հաշվարկները վկայում են «Խելացի» անասնաշենքի գործունեության բարձր արդյունավետության մասին:

Հետաքրքրական է նաև կարկտապաշտպան ցանցերի ներդրման արդյունավետության գնահատումը: Հաշվի առնելով, որ այն հայրենական հետազոտողների կողմից կատարվել է, առանձին դրան չենք անդրադարձել, այլ արձանագրում ենք ստացված արդյունքները:

Հակակարկտային ցանցերի կիրառման արդյունավետությունը գնահատելու համար հիմք է ընդունվել կարկուտից վնասի երեք տարբերակ, առաջինը, երբ շահագործման ժամկետի ընթացքում՝ 10 տարի (իրականում կարող է այն լինել առավել երկար), 3 տարին մեկ անգամ վնասը կազմում է 50 %, 75 % և 100 %: 10-րդ տարվա համար վնասի չափն ընդունվել է 3 տարիների 1/3 մասը: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ներկայացված բոլոր տարբերակներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման ծախսերը ծառայության ժամկետի ընթացքում փոխհատուցվում են: Առավել հավանական տարբերակ է համարվում երկրորդ տարբերակը: Այս դեպքում ծախսերը պտղատու այգիների համար փոխհատուցվում են միջինը 2.4 անգամ, իսկ խաղողի այգիների համար 3.1 անգամ²⁰:

Այսպես գյուղատնտեսության արդյունաբերականացմանն ուղղված տարբեր ուղղությունների (բաղադրիչների) արդյունավետության գնահատմանն ուղղությամբ կատարված հաշվարկները վկայում են արդյունաբերականացմանն ուղղված քայլերի բարձր արդյունավետության մասին:

¹⁹ ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ին «Խելացի» անասնաշենքերի զարգացման խթանումը: Այդ տեսանկյունից կարևորվում է «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» №369-Լ

²⁰ Գրիգորյան Հ.Հ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի մեղմման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Երևան, 2019. - էջ 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղատնտեսության արդյունաբերականացման բնագավառի խնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների առաջադրման ուղղությամբ իրականացված հետազոտությունների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

1. Գյուղատնտեսության արդյունաբերականացումը՝ դա ոլորտի արտադրական գործընթացի կազմակերպումն է արդյունաբերական հիմունքներով՝ կիրառելով արտադրության արդիական տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաներ: Ուսումնասիրությունները վկայում են, որ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում գյուղատնտեսության արդյունաբերականացման մակարդակը՝ ի տարբերություն տնտեսության այլ ոլորտների, էականորեն ցածր է: Արդյունաբերականացման մակարդակը բնորոշող ընդհանրական կատեգորիաներից է արտադրողականությունը, որի մակարդակը գյուղատնտեսությունում՝ տարբեր գործոններով պայմանավորված, տարբեր է ինչպես միևնույն երկրի գյուղատնտեսության տարբեր ճյուղերում, այնպես էլ ընդհանուր վերցրած տարբեր երկրներում: Գյուղատնտեսության արդյունաբերականացումը պահանջում է արտադրության գործընթացում չկիրառված առավել արդյունավետ տեխնոլոգիաների կիրառում, որակյալ աշխատուժի օգտագործում, արտադրական գործընթացում առավել կատարելագործված նյութերի ներդրում և այլն:
2. 2018թ. տվյալներով գյուղատնտեսության արտադրողականությունը զիջում է գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության և ընդհանուր արդյունաբերության ցուցանիշը համապատասխանաբար՝ 5.4 և 6.6 անգամ:
3. Գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտության հիմնավորման նկատառումներից ելնելով՝ կատարել ենք գոծոնային վերլուծություն: Փորձել ենք գնահատել սարքին վիճակում գտնվող գյուղատնտեսական հիմնական տեխնիկական միջոցների և գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների միջև փոխկախվածությունները 2009-2018թթ.: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ 2009-2018թթ. սարքին վիճակում գտնվող տրակտորների, բեռնատար մեքենաների և գյուղատնտեսության համախառն արտադրանքի միջև ձևավորվել է միջին ուժգնության կապ: Մասնավորապես ռեզրեսիոն վերլուծության արդյունքների համաձայն, այլ հավասար պայմաններում, գյուղատնտեսության համախառն արտադրանքի տատանումների 9,7%-ը պայմանավորված է ՀՀ-ում սարքին տրակտորների քանակի տատանումներով, իսկ 13,9%-ը պայմանավորված է սարքին վիճակում բեռնատար մեքենաների քանակի տատանումներով: 2009-2018թթ. ՀՀ-ում սարքին վիճակում գտնվող տրակտորային խոտհնձիչների քանակի և գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների միջև ձևավորվել է ուժեղ կապ: Ըստ վերլուծության արդյունքների՝ ուժեղ կապ է ձևավորվել նաև սարքին վիճակում գտնվող կերահավաք կոմբայնների, տրակտորային գութանների, կուլտիվատորների, հավաքիչ-մամլիչների քանակի և գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների միջև:
4. Գյուղատնտեսության արդյունաբերականացմանը նպաստման մոտեցումները տարբեր են: Մասնավորապես գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող խոշոր տնտեսավարողներն արդյունաբերականացման քայլեր կարող են ձեռնարկել սեփական միջոցների ներդրմամբ: Գյուղացիական փոքր տնտեսությունների արդյունաբերականացման հնարավորություններից է մատչելի նպատակային վարկերի կիրառմամբ արդյունաբերական տեխնոլոգիաների ներդրումը: Արդյունաբերականացման կարևորագույն մոտեցումներից է պետական ծրագրերով այդ գործընթացներին նպաստումը:

5. Գյուղատնտեսության առանձնահատկություններն իրենց անբարենպաստ ազդեցությունն են ունենում գյուղատնտեսության արդյունաբերականացման վրա: Գյուղատնտեսության արդյունաբերականացմանը խոչընդոտում է նաև ֆիզիկական անձանց կարգավիճակով տնտեսությունների փոքր չափերը: Ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող մեկ տնտեսության միջին չափը կազմում է 1.48 հա: Տնտեսությունների թվի բացարձակ գերակշռող մասում (99.9%) արդյունաբերականացման պայմանները՝ դրանց փոքր չափերի հետևանքով, սահմանափակ են: Դիտարկումները ցույց են տալիս, որ նույն վիճակն է նաև անասնապահությունում, որտեղ արդյունաբերականացման պայմանները բարենպաստ չեն՝ անասնազվաքանակի փոքրաթիվ լինելու պատճառով:
6. Գյուղատնտեսության արդյունաբերականացման բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրությունները վկայում են, որ տարբեր երկրներում գոյություն ունեն արդյունաբերականացմանն ուղղված միջոցներ, մեխանիզմներ: Սակավ ռեսուրսների պայմաններում՝ գյուղատնտեսության արդյունաբերականացման ընդօրինակելի փորձ ունի Իսրայելը: Վերջինիս փորձի առումով ներդրման համար արժեքվոր են ոռոգման բնագավառում կիրառվող արդիական տեխնոլոգիաները, խելացի տեխնալոգիայով աշխատող ջերմատնային տնտեսությունները և այլն: Այս տեխնոլոգիաների ներդրումը հանրապետությունում պահանջում է գյուղատնտեսական արտադրող-պետություն-հետազոտական հաստատությունների սերտ համագործակցություն:
7. Գյուղատնտեսության ոլորտի արդյունաբերականացման լավագույն նախադրյալ են ոլորտում մի շարք պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ իրականացվող, արդիական տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված ծրագրերը: Այդ ծրագրերի առանձնահատկությունների և իրականացման ընթացքի ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ դրանք հիմնականում չեն ապահովել նախանշված ծավալները: Անհրաժեշտություն է այդ ծրագրերի մեխանիզմների և դրանցում ներառված աջակցության տարրերի վերանայում, ինչպես նաև արդյունաբերականացմանն ուղղված նոր ծրագրերի իրականացում:
8. Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները բազմազան են: Դրանք կարելի է տարանջատել հետևյալ խմբերի՝ արդյունաբերականացման գործընթացի ֆինանսական ապահովումը, գյուղատնտեսությունում տնտեսավարող տնտեսությունների փոքր չափերը, տնտեսավարման ձևերի և ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտ մակարդակի ապահովումը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների արդյունաբերականացման պահանջներին համարժեք գիտելիքների և հմտությունների առկայության ապահովումը, արդյունաբերականացման գործընթացում պետություն-մասնավոր հատված համագործակցության կատարելագործումը, գյուղատնտեսության ոլորտում արդյունաբերականացմանն ուղղված պետական ծրագրերի մեխանիզմների կատարելագործումը և մոտեցումների վերանայումը: Աշխատանքում տրվել է նշված հիմնախնդիրների մեկնաբանությունն և գնահատականը՝ կոնկրետ չափերի օրինակներով: Ներկայացված 6 հիմնախնդիրները պայմանավորում են 21 գործոններ, որոնք բխում են գյուղատնտեսությունում մասնավոր տնտեսավարողների, ինչպես նաև պետական կառույցների գործունեությունից: Աշխատանքում առաջադրվել են այդ գործոնների մեկնաբանությունները, դրանց բարելավման առաջարկությունները:
9. Գյուղատնտեսության արտադրողականության վրա ազդող մի շարք գործոնների համատեղ ազդեցությունը գնահատելու համար համակարգչային ծրագրի միջոցով իրականացրել ենք ռեգրեսիոն վերլուծություն, որպես արդյունքային հատկանիշ ընդունել ենք 2004-

2018թթ. համար գյուղատնտեսության արտադրողականությունը (մլն դրամ/մարդ), իսկ գործոն հատկանիշներ ենք ընդունել՝ գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին մակարդակը, ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսությանը հատկացումները, գյուղատնտեսական ծագման արտադրանքի արտահանման ծավալները՝ արժեքային արտահայտությամբ, առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները: Ռեզրեսիոն մոդելների նշանակալիության ապահովման նպատակով վերլուծությունները կատարվել են առանձին-առանձին: Համաձայն կառուցված ռեզրեսիոն մոդելի՝ 2004-2018թթ. ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների յուրաքանչյուր մեկ մլրդ. դրամով ավելացումը, այլ հավասար պայմաններում, նպաստել է գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի ավելացմանը 0,02 մլրդ. դրամով: ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացումների ծավալների և գյուղատնտեսության արտադրողականության միջև ձևավորվել է ոչ նշանակալի կապ: Ինչպես երևում է կառուցված ռեզրեսիոն մոդելից, այս ցուցանիշների միջև եղել է հակադարձ կապ, որը պայմանավորված է եղել ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացումների ծավալների նվազման միտումներով և ոչ բավարար մակարդակով: ՀՀ-ում գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին մակարդակի մեկ տոկոսով ավելացումը նպաստել է գյուղատնտեսության արտադրողականության մակարդակի 13,1 տոկոսով աճին: Կառուցված ռեզրեսիոն մոդելի համաձայն, 2004-2018թթ., այլ հավասար պայմաններում, ՀՀ-ում գյուղատնտեսական ծագման արտադրանքների արտահանման ծավալների մեկ մլն. ԱՄՆ դոլարով ավելացմանը զուգահեռ, ՀՀ գյուղատնտեսության արտադրողականության մակարդակը ավելացել է 0.005 մլրդ. դրամով:

10. Գյուղատնտեսության արդյունաբերականացման գործընթացում պետություն մասնավոր հատված համագործակցության մեխանիզմների արդյունավետության բարձրացման մեթոդ կարող է լինել վենչուրային կապիտալ տնօրինող հիմնադրամների մասնակցությունը: Հաշվի առնելով գյուղատնտեսության արդյունաբերականացման մակարդակը, ոլորտի առանձնահատկությունները՝ վենչուրային հիմնադրամները նպատակահարմար է ձևավորվեն պետական կարգավիճակով: Աշխատանքում տրվել են վենչուրային հիմնադրամի գործունեության որոշ մոտեցումներ:
11. Աշխատանքի շրջանակներում գնահատվել է արդյունաբերականացմանն ուղղված մի շարք տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությունը.
- 11.1. Կատարված հաշվարկները ցույց են տալիս կաթիլային ոռոգման համակարգի բարձր արդյունավետությունը: Ըստ հաշվարկների՝ լոլիկի մշակության դեպքում համակարգի ներդրումից հավելյալ զուտ եկամուտը կազմել է 1358.5 հազ. դրամ, որը հնարավորություն է տալիս ծախսերը փոխհատուցել մեկ տարում, իսկ խնձորի և խաղողի մշակության դեպքում հավելյալ զուտ եկամուտը համապատասխանաբար կազմել է՝ 916.0 և 570.5 հազ. դրամ, որը հնարավորություն է տալիս ծախսերը փոխհատուցել շուրջ երկու տարում: Հաշվի առնելով այն, որ կաթիլային ոռոգման համակարգի խողովակների և կաթոցիկների օգտագործման ժամկետը առնվազն 5 տարի է, իսկ պոմպերինը և ֆիլտրերինը 10 տարի, ապա ակնհայտ է դառնում համակարգի ներդրման բարձր արդյունավետությունը:
- 11.2. Համապատասխան հաշվարկները վկայում են արդիական տեխնոլոգիաներով հագեցած ջերմատնային տնտեսությունների գործունեության արդյունավետության մասին: Ջերմատնային տնտեսությունում կապիտալ ներդրումները փոխհատուցվում են կարճ ժամանակահատվածում: Ամորտիզացիոն հատկացումների ծախսերը հաշվի առնելով՝ ծախսերը

համապատասխանաբար փոխհատուցվում են՝ 6.5; 5.2; 3.8 և 4 տարիների ընթացքում, որոնք կապիտալ ներդրումների փոխհատուցման լավագույն ժամկետներ են:

- 11.3. Գյուղատնտեսության արդյունաբերականացման կարևոր ուղղություններից է ինտենսիվ այգեգործության զարգացումը, հետևաբար կարևոր ենք համարել անդրադառնալ ինտենսիվ այգեգործության արդյունավետության հարցերին: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ առաջին 4 տարիների ընթացքում ստացված հասույթի հաշվին փոխհատուցվում են այգիների հիմնման ծախսերը խնձորենու, տանձենու, ծիրանենու, դեղձենու և խաղողի համար: Նույն առաջին 4 տարում ստացված շահույթի հաշվին փոխհատուցվում են խնձորենու, ծիրանենու հիմնման ծախսերը: Սալորենու հիմնադրման ծախսերը՝ հասույթի հաշվին, ամբողջությամբ փոխհատուցվում են առաջին 5 տարվա ընթացքում: Շահույթի հաշվին տանձենու ինտենսիվ այգու հիմնման ծախսերը փոխհատուցվում են 5 տարվա ընթացքում: Ինչ վերաբերվում է սալորի և խաղողի ինտենսիվ այգու հիմնադրման ծախսերին, ապա դրանք, ըստ մեր կողմից կատարված հաշվարկների, փոխհատուցվում են 8-րդ տարում: Կատարված հաշվարկները վկայում են ինտենսիվ այգեգործության բարձր արդյունավետության մասին, որը գյուղատնտեսության արդյունաբերականացման կարևոր ուղղություններից է: Հանրապետության համար առավել բարձր արդյունավետություն ապահովում են խնձորենու, ծիրանենու և դեղձենու ինտենսիվ մշակությունները:
- 11.4. Գյուղատնտեսության արդյունաբերականացման կարևոր ուղղություններից է «Խելացի» անասնաշենքերի զարգացման խթանումը: «Խելացի» անասնաշենքի արդյունավետությունը գնահատվել է 25 կովի պահվածքի դեպքում: Նպատակահարմար ենք համարել հաշվարկները կատարել Հուլիսի ցեղի կովերի համար: Հաշվի առնելով այն, որ անասնաշենքը նախատեսված է մթերատու կովերի համար, կատարված ծախսերի փոխհատուցումը դիտարկել ենք արտադրված կաթի իրացումից ստացված շահույթի հաշվին: Կատարված հաշվարկներով՝ «Խելացի» ֆերմայի գործունեության արդյունքում միայն կաթի իրացումից ստացված շահույթի հաշվին ծախսերը փոխհատուցվում են 5.5 տարում: Այստեղ հաշվի չի առնվում մատղաշի ստացումը, այն, որ տարեկան կստացվի շուրջ 23 գլուխ հորթ, որը գնահատվում է որպես առանձին եկամուտ: Կատարված հաշվարկները վկայում են «Խելացի» անասնաշենքի գործունեության բարձր արդյունավետության մասին:
- 11.5. Հետաքրքրական է նաև կարկտապաշտպան ցանցերի ներդրման արդյունավետության գնահատումը: Հաշվի առնելով, որ այն հայրենական հետազոտողների կողմից կատարվել է, առանձին դրան չենք անդրադարձել, այլ արձանագրում ենք ստացված արդյունքները: Հակակարկտային ցանցերի կիրառման արդյունավետությունը գնահատելու համար հիմք է ընդունվել կարկտաից վնասի երեք տարբերակ, առաջինը, երբ շահագործման ժամկետի ընթացքում՝ 10 տարի (իրականում կարող է այն լինել առավել երկար), 3 տարին մեկ անգամ վնասը կազմում է 50 %, 75 % և 100 %: 10-րդ տարվա համար վնասի չափն ընդունվել է 3 տարիների 1/3 մասը: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ներկայացված բոլոր տարբերակներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման ծախսերը ծառայության ժամկետի ընթացքում փոխհատուցվում են:

**Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները
արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Оганнисян А. Ц. Влияние уровня обеспеченности техникой на рост производства валовой продукции сельского хозяйства (на примере АПК Армении) // Вестник, Том 13 выпуск 3 (66), Воронеж, 2020. – с. 188-194
2. Ղազարյան Է., Հովհաննիսյան Ա. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները // Այլընտրանք գիտական հանդես, ապրիլ-հունիս, Երևան, 2020թ. – էջ 129-136
3. Ղազարյան Է., Հովհաննիսյան Ա. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման հնարավոր ուղիները // Այլընտրանք գիտական հանդես, ապրիլ-հունիս, Երևան, 2020թ. – էջ 225-234
4. Ղազարյան Է., Հովհաննիսյան Ա. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացմանն ուղղված պետական ծրագրերը և դրանց իրականացման արդյունավետության գնահատումը // Այլընտրանք գիտական հանդես, հուլիս-սեպտեմբեր, Երևան, 2020թ. – էջ 286-294
5. Հովհաննիսյան Ա. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղիները // Այլընտրանք գիտական հանդես, հուլիս-սեպտեմբեր, Երևան, 2020թ. – էջ 295-305
6. Казарян Э. С., Оганнисян А. Ц. Некоторые вопросы решения основных проблем индустриализации в области сельского хозяйства Республики Армения // Научный журнал «Эпомен», № 39, Краснодар, 2020. - с. 95-102

ОГАННИСЯН АРАМ ЦОЛАКОВИЧ

ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ИНДУСТРИАЛИЗАЦИИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика и управление хозяйством, его сферами»

Публичная защита диссертации состоится 28-го декабря 2020 года в 14⁰⁰ часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74.

РЕЗЮМЕ

Основной целью работы является выявление проблем индустриализации сельского хозяйства Республики Армения и определение основных направлений их решения. Сельское хозяйство республики занимает важнейшее место в формировании валового внутреннего продукта страны, обеспечении занятости в республике, развитии сельских территорий, что наиболее важно для обеспечения продовольственной безопасности населения, но в силу ряда объективных и субъективных факторов уровень индустриализации сельского хозяйства значительно ниже, в частности, низок уровень механизации процессов сельскохозяйственного производства, в результате чего высока доля ручных работ.

Основная новизна исследования заключается в том, что в результате выявления экономических проблем индустриализации сельского хозяйства были определены основные направления их решения. Основные научные результаты обусловлены проблемами, выдвинутыми в исследовании, в частности:

- В контексте особенностей сельского хозяйства Республики Армения дана оценка условий и факторов индустриализации отрасли;
- Выявлены экономические проблемы индустриализации сельского хозяйства Республики Армения;
- Оценено количественное влияние ряда факторов на индустриализацию сельского хозяйства;
- Разработаны основные направления решения экономических проблем индустриализации АПК;
- Проведена оценка экономической эффективности предложенных направлений индустриализации сельского хозяйства.

В первой главе диссертации представлена сущность и особенности аграрной индустриализации, необходимость индустриализации сельского хозяйства и подходы к ее продвижению, особенности сельского хозяйства Республики Армения и условия индустриализации отрасли. Индустриализация сельского хозяйства - сложный процесс в виду особенностей отрасли. Подавляющее большинство фермерских хозяйств с сельскохозяйственными угодьями (99,9%) небольшие, со средним размером 1,48 га, что затрудняет внедрение процесса индустриализации.

Во второй главе диссертации представлен международный опыт индустриализации сельского хозяйства, возможности локализации, современные предпосылки аграрной индустриализации в Республике Армения и экономические проблемы индустриализации. Изучение международного опыта в области индустриализации сельского хозяйства показывает, что в разных странах существуют средства, механизмы, технологии индустриализации, которые используются в стране в незначительной степени.

В третьей главе представлена количественная оценка влияния факторов индустриализации сельского хозяйства, основные направления решения экономических проблем индустриализации отрасли, экономическая эффективность предложенных направлений индустриализации сельского хозяйства. В работе дана оценка эффективности внедрения ряда технологий, направленных на индустриализацию.

Проведенные в диссертации комплексные исследования для выявления экономических проблем индустриализации сельского хозяйства, их решения и разработанные предложения имеют теоретическое и практическое значение и в случае их применения могут способствовать для совершенствования проводимой политики, разработки концепций и программ в данной области.

HOVHANNISYAN ARAM

THE ECONOMIC PROBLEMS OF AGRICULTURAL INDUSTRIALIZATION OF THE REPUBLIC OF ARMENIA AND THEIR SOLUTION WAYS

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of economics in the speciality 08.00.02 – «Economics and Management of Economy and its Spheres»

The defense of the thesis will take place on 28 December 2020, at 14.00 o'clock at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan, 0009.

SUMMARY

The main goal of the work is the identification of the problems of agricultural industrialization of the Republic of Armenia and setting the main ways of their solution. The agriculture of the republic has the most important place in the country's gross domestic product, the employment of the republic, the development of rural areas, and, which is the most important, for the food security of the population, but due to a number of objective and subjective factors, the level of industrialization in agriculture is significantly lower, particularly the level of mechanization of agricultural production processes is low, due to which the share of manual labor is high.

The main novelty of the research is that as a result of identifying the economic problems of agricultural industrialization, the main ways of their solution have been predetermined. The main scientific results are conditioned by the problems set within the framework of the research, in particular:

- The conditions and factors of the sphere industrialisation were evaluated in the context of the peculiarities of the agriculture of the Republic of Armenia,
- The economic problems of the agricultural industrialization of the Republic of Armenia were revealed,
- The quantitative impact of a number of factors affecting agricultural industrialization was assessed
- The main ways of solving the economic problems of agricultural industrialization have been developed,
- The economic efficiency of the proposed ways of agricultural industrialization was assessed.

In the first chapter of the dissertation the essence of agricultural industrialization and its peculiarities, the necessity of agricultural industrialization, the approaches to its promotion, the peculiarities of agriculture of the Republic of Armenia and the conditions of industrialization of the sphere are presented. The industrialization of agriculture is a complex process due to the peculiarities of its field. The vast majority of the farms with agricultural lands (99.9%) are small, averaging 1.48 hectares, which makes the industrialization process difficult to implement.

The second chapter of the dissertation presents the international experience of agricultural industrialization, the possibilities of localization, the current preconditions of the agricultural industrialization of the Republic of Armenia and the major economic problems of industrialization. The study of the international experience in the field of agricultural industrialization shows that in different countries there are means, mechanisms, technologies for industrialization that are used to a small extent in the country, in addition, most of the technologies can be introduced in our country if appropriate conditions are created.

The third chapter of the dissertation presents the quantitative assessment of the impact of factors of agricultural industrialization, the main directions of solving the economic problems of agricultural industrialization, the economic efficiency of the proposed directions of agricultural industrialization. The work evaluates the effectiveness of the introduction of a number of technologies aimed at industrialization.

The comprehensive studies carried out in the dissertation to identify the economic problems of the RA industrialization and the presented proposals of solution are of theoretical and practical significance and if applied can be a real basis for policy improvement, concepts and programs in the given field.

A handwritten signature in black ink, consisting of several fluid, overlapping strokes that form a stylized, cursive name.